

քի: Կահան կոխը, որ երկու տարրերու պայքարի մղիչ ուժն էր, որ ե՛ւ ազգային ե՛ւ գասակարգային բնոյթ ունէր, շատ յաճախ կ'անտեսուէր, մասնաւորաբար մէկ տարրի կողմէ, հայերէ, երբ թուրք իշխանութիւնը՝ մէկ կողմէ գօրքի եւ կառավարական այլ միջոցներով կը պահպանէր իր պետական շէնքը, միւս կողմէ՝ յենած թուրք-թաթարական զանգուածներուն՝ անյողողօղ կը մնար հայ տարրը բնաջնջելու իր որոշակի գործելակերպին մէջ:

Այսպէս, գասակարգայնօրէն եւ ազգայնօրէն այս անշարիր երկու ցեղերը կրնային խաղաղութեան նուահանդիստը հասնիլ կամ իրար ջնջելով, որ մէկ կողմի յազմանակին պիտի յանգէր, եւ կամ ուժերը սպառած այս արիւնալի կռուէն, պիտի տեղի տային եւ բաժնուէին: Բաժնուէին ե՛ւ ցեղով ե՛ւ հայրենիքով, ինքնուրոյն կեանքի մէջ հանգիստ որոնելու: Ահա, այսպիսի սուր հակամարտութեան հետեւանքով, այս երկու ցեղերը պիտի փնտռէին յենարաններ եւ կողմնակիցներ եւ պիտի հակէին մէկ ուժի կողմ, որ զիրենք պիտի գօրացնէր՝ հասնելու իրենց վերջնական նպատակներուն:

* * *

Այս հիմնական կէտէն կարելի է մեկնել, հայ ժողովուրդի հակումները քննութեան առած ժամանակ: Այդ հիմնական երակէտի վերայ փարսխուած է նաեւ հայոց ուսական օրինատացիան:

Ռուսական այն բոլոր քայլերը, որ ուղղուած են թրքական պետութեան դէմ, ուղղուած են նաեւ թուրք-թաթարական տարրի դէմ: Հայ ժողովուրդն այդ պարագային, բաց սրտով ողջունած է Ռուսաստանի ներկայութիւնը: Ինչ որ վնասակար եղած է քուրքին, օգտակար նկատուած է հայուն:

Ահա կշիռը հայ ժողովուրդի բնագրին եւ որոշ չափով ալ քաղաքական մտքին:

Այս կշռով մօտենալով դրացի մեծ ու պզտիկ ազգերուն, բնական է, որ հայ ժողովուրդը շատ յաճախ իր շահերու նժարը թեթեւ գտնար, ու վերապահ մնար, կամ խաբուած ու լքուած նկատէր ինքզինքը՝ այն սպասելիքներէն, որ ան կ'ակնկալէր Ռուսաստանէն եւ մեծ պետութիւններէն:

Օրինատացիան ազգերու եւ պետութիւններու շահերու դասաւորութեան, փոխադարձ օգտագործումի եւ նուազագոյն ճիւղով, առաւելագոյն յաջողութեան յանգելու պայմանաւորում մըն է, որ մէկ ազգին կամ պետութեան կը մղէ հակելու այս կամ այն կողմը, նայած պարագաներուն, ուժերու դասաւորումին, եւ շահերու ներդաշնակումին: Որով, այս կամ այն օրինատացիան ունենալը հիմնական ու մընայուն քաղաքական ուղեգիծ մը չէ, ու ենթակայ է փոփոխութեան, ըստ պարագաներու:

Հայոց ուսական օրինատացիան ալ փոփոխական շրջաններ ունեցած է: Հայ ժողովուրդը շատ յաճախ ջերմ ուսասէր եղած եւ իր ժողովրդական պոթիկումներով եւ կամաւորական շարժումներով՝ ուսական արշաւներու յատաշատահը հանգիստացած է, գտնելով, որ այդ արշաւանքները մէջքը կը կոտրէին թրքական եւ պարսկական պետութեանց եւ կ'ընկճէին թուրք-թաթարական տարրը: Հայ ժողովուրդը կը յուսար, որ այդ շարժումներու շնորհիւ հնարաւորութիւն պիտի ունենայ իր ստրկութեան փոշին թօթափել եւ շունչ քաշել պատրաստուելու դալիք վճռական պայքարներուն: Բայց 19-րդ դարու վերջին շրջանին պատմական անցքերն առանձնապէս չողերեցին հայ ժողովուրդը, եւ մենք կը տեսնենք, որ ուսական պետութեան ընթացքը, ուսական օրինատացիան կը սկստանար հայ ժողովուրդի մէջ, պարզ այն պատճառով, որ ուս պետութիւնը կը հովանաւորէր հիւանդ մարդու՝ Թիւրքիոյ կիսակործան գոյութիւնը:

Մեծ պետութիւններու հակամարտութիւնները, ինչպէս նաեւ ուսական կեանքի ներքին զրդապատճառները յամենայն դէպս, ուսական դիւանագիտութեան եւ կառավարութեան խոժոռ դէմքը ցոյց կուտային հայ ժողովուրդին, որ ենթակայ էր թուրք-թաթարական դերպանց ուժի եւ բռնութեան վտանգին: Բնական է, որ հայը այլեւս այս ստույգեալ կողմը չպիտի կրնար իր դէմքը դարձնել, ջերմութիւն ստանալու համար:

Այսպէս էր դրութիւնը 80-ական թուականներէն սկսած, որ շարունակուեցաւ մինչեւ 1914-ի համաշխարհային պատերազմը, միայն